«Արդ այժմ Աստուածապատում և Քրիստոսաւանդ տաւիցս ցանկացող եղեալ, Աստուածարեալ և պատուական այրն պարոն Ուլուխան և ետ գրել զսուրբ Աւետարանս ի վայելումն անձին իւրոյ և յիշատակ հոգւոյ իւրոյ»։

Է Աւետարան Ղալակայ գիւղի եկեղեցւոյ մէջ, որ յանձնուած է տեղւոյն Ներսէս քահանայի պահպանութեան։

Աւետարանս, որ կոչի Կարմիր Աւետարան, ունի հետեւեալ յիշատակարանը.

«Փառք հաւր և Որդւոյ և հոգւոյն սրբոյ . . . . . Արդ ես անարժանս և անպիտան անուամբ Խունկ կոչեցեալ. բայց ի վարս և ի հոտս և ի համս դառն . . . և անարդ ի գործս քահանայութեան . . . գրեցի սուրբ Աւետարանս ի թվին Հայոց ՋԼԲ։

Բ. Աւետարան Բ. Ղալակայ գիւղի եկեղեցւոյ մէջ, որը յանձնուած է տեղւոյն Սարգիս քահանայի պահպանութեանը և ունի այսպիսի յիշատակարան.

«Փառք Ամենասուրբ Երրորդութեանն . . . . . Գրեցաւ սուրբ Աւետարանս ձեռամբ փրծուն և բազմամեղ գրչի և սուտ անուն վարդապետ Արեթի ի դեղս Անուշ շաւայտուն հնդուզակ ի դուռն սուրբ եկեղեցուս, ուր մասն Պանդալիոն բժշկի և սրբոցն, որ աստ կան հաւաքեալ ի հայրապետութեան տանս Աղուանից Տէր Գրիգորիսի ի գանութեան Շահ Թամազի, ի թուականութեան Հայ տումարիս ՌԺԳ. գրեցաւ . . .

Արդ ես թանգսիզ տուի գրել սուրբ Աւետարանս ի գաւառին Խաչենայ Արցախ նահանգի ի վանս Մեծիրանայ Ս. Յ ա կոբայ»։

Թ. Աւետարան Դ. Ղալակայի եկեղեցւոյ մէջ, որը նոյնպէս յանձնուած է Սարգիս քահանայի պահպանութեանը և որ գրուած է Գողթան գաւառի Փառակայ գիւղումն. թվին ՌՃԺԴ. որոյ յիշատակարանն է այսպէս.